ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5632-Ա «18 » նոյեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ռուսաստանի Դաշնության նախագահի խորհրդական, Միջազգային համայնքային ֆորումի նախապատրաստման և անցկացման կազմկոմիտեի պատասխանատու քարտուղար Անտոն Կոբյակովի հրավերը՝ 2026 թվականին Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայի «Ռոսիա» ազգային կենտրոնում կայանալիք Միջազգային համայնքային ֆորումին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2026 թվականի նոյեմբերի 22-ից 25-ը ներառյալ գործուղել Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա՝ հետևյալ կազմով.

Սուրեն Գրիգորյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Լուսինե Դայան	Երևանի քաղաքապետի խորհրդական
Արթուր Ջուլհակյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի առաջատար մասնագետ

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանին:

4.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի առաջատար մասնագետ Արթուր Ջուլհակյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արարողակարգի բաժնի առաջին կարգի մասնագետ Միլենա Հարությունյանին:

5. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ